

ՏԱՄՆ ԵՒ ՎԵՏՏԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ: Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նոյա կայսերական Մեծութիւնները Թիֆլիսում. Նամակ Ախալքալաքից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նշանածը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՅԱ ԿՈՍՏԱՆԲՈՒՆՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Շարունակում ենք նկարագրել Նոյա Մեծութիւնների այցելութիւնները, կրկին հետևելով ուսու պաշտօնական «Кавказъ» և «Новое Общественное» լրագրիներին:

Սեպտեմբերի 29-ին ազնակամները սուած պարահանդէսը շատ փառաւոր էր: Ժողովարանը դրօշը զարդարված և գեղեցիկ լուսաւորված էր, իսկ նրա առաջ խմբված ազգային բազմութիւնը աւելի հետաքրքիր կերպարանք էր տալիս երեկոյան հանդիսին: Ժողովարանի շինութիւնը ներսից աւելի շքեղ էր զարդարված՝ ծաղիկներով և զօրգերով: Երեկոյեան ժամը 9-ից սկսեցին հաւաքվել հրահրվածները, որոնք մեծ մասամբ աշխուակամներ՝ յատկապէս այդ օրվայ համար պատուիրված համազգեստներով էին, իսկ միւս մասը տեղական շորերով և Ֆրանկերով: Կանայք փայլում էին իրանց գոյնզգոյն և շքեղ հագուստներով: Ժողովարանի դահլիճները լի էին կատարելապէս ժամը մտ 9 3/4-ին փողոցում թնդաց (ուրա), որը նշան էր արդէն, որ Նոյա Մեծութիւնները եկան: Վերջապէս ժողովարանի դահլիճում երևացին թաղաւոր կայսրը և Թագուհին: Կայսրուհին: Կայսրը երևանեան դիլի նշանազանտով էր: Թագուհին շքեղազարդ էր:

Նոյա Մեծութիւնների գալուց մի փոքր յետոյ սկսվեցաւ «պօռնեց» կայսրուհին անցաւ ձեռունի իշխան Բազդաթիւն-Մուխրանսկու հետ, կայսրը՝ իշխանուհի Քէթևան Օրբէլիանու հետ,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՇԱՆԱԾԸ

III

Շիրազեանը մնաց սառած. այս պատահարը նրան կրող էր թուժ. նա այս դրութեան մէջ հասաւ իր սենեակը, ուր դանդաղ էր Հախվերդեանը: Պէտք է նկատած, որ Հախվերդեանը այդ ժամանակ Թիֆլիսումն էր ապրում և Շիրազեանի հետ միասին: Նա, Թիֆլիսում թագաւորական ծառայութեան մէջ մտնելով, այդտեղ էլ մնաց: Երբ Շիրազեան, յօնքերը հաւաքած, լուռ ու մունջ ներս մտաւ, Հախվերդեանը, անկողնում պառկած, գիրք էր կարդում: Նա բարձրացաւ, նայեց ժամացույցին և քմիքով տարով դարձաւ Շիրազեանին.

—Ինչու այսպէս շուտ, դու ժամի կրկուսն է միայն: —Ապա ինչ ունէի այնտեղ սպասելու, անբաւականութեամբ պատասխանեց Շիրազեանը և առանց շորերը հանելու՝ ինչպէս մի ջարդված ու յոգնած մարդ՝ ընկաւ անկողնու վրա:

Իսկ Թագուհին առաջ իշխանուհի Մէլիքովայի հետ Անցնելով դահլիճը Նոյա Մեծութիւնները բռնեցին իրանց առաջվայ տեղը և սկսեցին խօսակցել ներկայ եղող տիկիներին: հետ, որոնցից երեքը, այն է իշխանուհի օրբորը: Մէլիքովա, Արգուսինայա-Ներկայաբաղուկ և Սումբատովա հէնց նոր արժանացել էին ֆրէշ-լինայի կոստիւմը:

Մի փոքր անց լսվեց Վրաստանին լաւ ծանօթ և սիրելի «դահլիճայի» ձայնը, անմիջապէս կարմիր մի փոքրիկ շրջան և սկսվեց «լէզզիկան», որը, ինչպէս երևաց, դուր եկաւ Նոյա Մեծութիւններին և Նոյա ցանկութեամբ երկբող անգամ կրկնվեց: Լէզզիկայի վերջնալուց յետոյ Նոյա Մեծութիւնները հեռացան ետի սենեակները:

Իրանից յետոյ սկսվեցան ոչնորված պարերը: Այդ պարերին մասնակից էին Թագուհին, Մայրը, Մայրը և Մեծ իշխան Գեորգի Ալեքսանդրովի: Ժողովարանի դահլիճները մէկտեղ պատրաստված էր ճոխ սեղան, գեղեցիկ խմբիչներով:

Ուղի ժամը 11 1/2-ին Նոյա Մեծութիւնները հեռացան ժողովարանից և վերադարձան պալատը, իսկ մնացած հրերը գեւ. երկար մնացին ժողովարանի դահլիճներում՝ շարունակելով պարել և ուրախանալ:

Միւս օրը, սեպտեմբերի 30-ին, առաւօտեան 10 1/2 ժամին, Նոյա Մեծութիւնները, ուղեկցութեամբ պալատի մինիստր Վորոնցով-Վաչկովի, ղեկավարական մինիստր Վանուսիւկու, կովկասեան կառավարչապետ իշխան Գոնուկով-Վորսակովի և ուրիշների գնացին Նախուր, հանդիպելով փողոցներում ժողովրդի «ուրալին»: Ցիցիանովի դահլիճայի վրա մարկանդիզները ներկայացրին Նոյա Մեծութիւններին իրանց պատրաստած ընծաները: 10 ժամ 40 րոպէին Նոյա Մեծութիւնները մտան Նախուրի ղեկավարական հրահանուցով, այցելեցին հիւանդանոցի սենեակները, անդամատակարար կարիւնտը, Ֆելդշերան զարդը, և հիւանդներին: Իրանից յետոյ Նոյա Մեծութիւնները մտան հիւանդանոցի եկեղեցին, և ապա սրտակից խօսակցութիւն... հաճելի զգացմունքներ... յետոյ... յետոյ... էն ստանան տանի ձեռք...

—Ո՛հ, վայրենի երևակայութիւն, մթմթեց Երազեան, երեսը դէպի պատը դարձնելով, և առանձին նշանակութիւն չը տարով Հախվերդեանի խօսքերին, քանի որ գիտէր արդէն նրա բնաւորութիւնը:

—Ինչ է, ինչ է, էլ ինչ է ևս ճշմարտի պէս երեսդ դարձնում, եթէ ասածներս չեն պատահել, հեշտութեամբ կարող են պատահել... —Ի՛նչ, թող ինչդեմ:

—Ի՛նչ է, ճիշդ չեմ ասուի: —Գու ի՛նչ գիտես, դու ի՛նչ գիտես,—ասա ինչդեմ, փոքր ինչ վրդովված ու կրեւըր դէպի Հախվերդեանը դարձնելով հարցրեց Շիրազեանը:

—Ես ի՛նչ գիտեմ... միթէ կարծում ես, թէ ես կոյր եմ:—Որ տիկին Վարվաքէն մի րօպէ լեզ մտնանալ չէ կարող,—դրա մէջ ոչ ոք չէ կասկածում, որ նա լեզ սիրում է «այրի կնոջ» սիրով:—այդ էլ զգաւոր է:

—Ես ի՛նչ ես կարծում, ես էլ նրան եմ սիրում, հա, անբաւականութեամբ հարցրեց Շիրազեանը:

—Այդ մի և նոյն է—դու էլ սիրում ես, թէ ոչ:

—Ինչպէս: Եթէ ես չը սիրեմ նրան, ապա ինչպէս կարող է մեր մէջ տեղի ունենալ այն, ինչ ներկայացնում է լեզ թո վայրենի երևակայութիւնը:

Մի բարձր լեզուց յաջորդեց Շիրազեանի խօսքերին:

—Երեկայ, կատարեալ երեկայ: Այ լեզ խօսք: Գեղեցիկ կնոջ բաւականութիւն սուլու համարէլ:

այցելեցին Նախուրի ողորմած քոյրերին և Նախուրեան ապաստարանը: Ժամը 12-ին Նոյա Մեծութիւնները դարձան պալատը, ուր պատրաստված էր ընտանեկան նախաճաշի:

Ժամը 2-ին, կէսօրից յետոյ, Նոյա Մեծութիւնները, բարձրատանի անձերի ուղեկցութեամբ, բարեհաճեցին այցելել կովկասեան մուզէյը, ուր Նոյա ղեկավարեցին կովկասեան ուսումնարանական շրջանի հողաբարձուն և մուզէյի դիրէկտոր Բարդէ: Օղոստափառ ճանապարհորդները մեծ ուշադրութեամբ դիտեցին ամբողջ մուզէյը, որը տեղի մի ժամ Գուրս դնալիս Նոյա Մեծութիւնները բարեհաճեցին իրանց անունները ստորագրել այդ նպատակով առանձին պատրաստած թերթի վրա:

Մուզէյից Նոյա Մեծութիւնները անցան իզալան գիմնապահան, ուր խմբված էին տեղական օրիորդական դպրոցների աշակերտները: Ստանալով աշակերտներից ընծաներ, և կովկասեան ուսումնարանական շրջանի հողաբարձուի ուղեկցութեամբ շրջապայտով գիմնապահան, Նոյա Մեծութիւնները, աշակերտներին «ուրալի» ուղեկցութեամբ, գնացին կովկասեան ղեկավարական մուզէյի նոր պատրաստած շինութիւնը, ուր Նոյա սպասում էին մուզէյի դիրէկտոր Բարդէ և ղեկավար-մայր Էրնատ: Նոյա Մեծութիւնները բարեհաճեցին նայել պատկերները և մուզէյը, որը առ այժմ դեռ բոլորովին պատրաստ չէ:

Ղեկավարական մուզէյից Նոյա Մեծութիւնները գնացին կաղնուների կողմաւոր, շրջակայքին այդ ղեկավարական դպրոցը, լսեցին աշակերտներին նուազը և երգերը, և «ուրալի» ուղեկցութեամբ ժամը 4 3/4-ին դարձան պալատը:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 7-ին, տեղի ունեցաւ պալատում ճաշ, որին ներկայ էին բարձր հողաբարձուները, ի միջի այլոց Վեհափառ Մալկար Վաթովիկոյը, պալատական աստիճանաւորները, քաղաքացիական և ղեկավարական բարձր պաշտօնեաներ, ազնուականներ և կանայք:

Սեպտեմբերի 30-ին, երեկոյեան Մուշտափայ գլխով կայացած ժողովրդական զբօսանքը շատ փառաւոր էր: Միջապէս փողոցը որտեղ պէտք

է անցնէին Նոյա կայսերական Մեծութիւնները շքեղ զարդարված էր: Մուշտափայ դրանք շինված էր յաղթական կամար, որի վրա դրած էր «ДОБРО ПОЖАЛОВАТЬ»: Մուշտափայ և փառաւորապէս զարդարված էր: Այդու առաջին հրապարակի վրա շինած էր շքեղ պալիլիճ, ասիական արևելեան ճաշակով: Ելելուտակաւ լուսաւորութիւնը դիւթական կերպարանք էր տուել այդու, ուր խմբված էր անապին բազմութիւն՝ կանայք՝ թանաք գլին հագուստներով, իսկ տղամարդիկ՝ ֆրանկերով, նշանազգեստներով և չէրքեղաներով:

Ժամը 9 1/2-ին Նոյա կայսերական Մեծութիւնները եկան Մուշտափայ բազմութիւնը «ուրա» գոթելով ընդունեց Բարձր Հիւրերին, որոնք անցան պալիլիճի դահլիճը և տեղաւորվեցան արջայական լոծայում: Մի փոքր ժամանակից յետոյ արջայական լոծայի առաջ շինված տեղեւորմ սկսվեց «լէզզիկան», որը բաւական երկար տեղի և ինչպէս և այս անգամ, շատ դուր եկաւ Նոյա Մեծութիւններին:

Հետաքրքիր էր և այն, որ այդու ծառուղիներից մի քանիսում գցել էին տեղական սովորութեամբ «սուփրաներ», ուր համբարները, թուով աւելի քան 500 մարդ, ուսում և խմում էին, հիւրասիրելով անցուղաւձ անողներին ղեկով:

Ամենից մեծ ուշադրութիւն դրածուց հրախաղաւթիւնը, որը պատրաստված էր Մուշտափայի դիմացի բլրի վրա, կուրի միւս կողմում: Երբ Նոյա Մեծութիւնները անցան պալիլիճի արևմտեան կողմը, որը զարճած էր դէպի կուրը, անապին բազմութիւնն էլ խոնկեց դէպի այն կողմը՝ հրախաղաւթիւնը տեսնելու համար: Ասեղ գցելու տեղ չը կար. մարդիկ խոնկած էին միմեանց վրա աներևակայելի կերպով: Ի նկատի ունենալով այդ, իշխան Գոնուկով-Վորսակովի ղեկից Թագաւոր-կայսրին և ասեղ. շնորհեց, Ձեր Մեծութիւն, այստեղի ժողովուրդը պարզ է. բայց ոչ մի տեղ իշխող աւելի հանդիս չէ կարող լինել, որքան այս ժողովրդի մէջ:

Հրախաղաւթիւնը համարեա մի ժամ տեղի և իր գեղեցկութեամբ և շքեղութեամբ ամենքին հիացմունք պատճառեց, մի և նոյն ժամանակ

—Ի հարկէ: Եւ այդպէս էլ պէտք է լինի... —Նու... դա արդէն անասնական է, եղբայր, և վիրաւորական, բացականչեց Շիրազեան:

—Բոլորովին վիրաւորական չէ: Եւ իմ կարծիքով շատ էլ ընտանի է... —Հերիք է, հերիք է, կտրեց Շիրազեանը Հախվերդեանի խօսքերը. եթէ անկեղծ ես ասում ու այդպէս էլ զրուս—դու ուրեմն փչացած ու կոպտ մարդ ես, որովհետեւ սերը մարդու ամենամուրը զգացմունքներից մէկն է, և նա կարող է գոյութիւն ունենալ միայն նրբացած մարդկանց մէջ. ինչ ասեմ քեզ: Պատանի չես, որ ասեմ, թէ ապագան խելքի կը բերի... —Ինչպէս ուզում ես կարծիք, պատասխանեց Հախվերդեանը անհողութեամբ և երեսը շուռ տալով լուեց: Նա մտքում Շիրազեանին իղէալիստ անուանեց, որը նրա լեզուով մի փոքր յիմար բառին համանիշ էր: Բայց երկար ժամանակ Հախվերդեանը չը կարողացաւ քնել... Նրա երևակայութեան առաջ կանգնած էր տիկին Վարվաքէն և միւս կողմից Շիրազեան, որը չէր հասկանում զգայուն կնոջ ցանկութիւնները...

—Այո, եթէ ես լինեի նրա տեղը Ախ, եթէ ինձ պատահէր այդպիսի դէպք: Յիմարութիւն, յիմարութիւն է այսպէս վերաբերվել դէպի այդ կինը: Պէտք է ձեռք գցել նրան,—ասեց Հախվերդեանը և վճռեց դիմել այդ նպատակին... Եւ նրան այդ կաջողվեց:

Տիկին Վարվաքէն խստամտութիւնից երեք օր էր անցել, որ նա ու Շիրազեանը այլ ևս իրար չէին հանդիպել: Շիրազեանը փախուստ էր տալիս տիկին Վարվաքէնի հետ կրկին հանդիպելուց, բայց, թարսի պէս, հակառակը պատահեց Շիրազեանի հետ: Երբորը օրվայ երեկոյեան դէմ,

—Այո, սեր է հարկաւոր, այժմ բոլորովին բորբոքված պատասխանեց Շիրազեանը: Առանց սիրոյ կնոջ մերձենալ միայն դազանները կարող են, հասկանում ես, թէ ոչ:

—Հը,—ի հարկէ ոչ: —Ուրեմն դու բացասում ես, որ առանց սիրոյ և առանց զգացմունքի անկարելի է մերձենալ կնոջն:

—Հա, հա, հա,—կրկին լեզուց Հախվերդեանը: —Մէր կամ առեւութիւն—անա երկու զգացմունքներ, որոնցից առաջինը ինձ կը հարկաւորէ մտնանալ մի կնոջ, իսկ միւսը կը վանի նրանից:

—Չէ կարող պատահել միթէ, որ ոչ այս լինի, և ոչ այն, այսինքն ոչ սեր և ոչ էլ առեւութիւն: —Ի հարկէ կը պատահի: Եթէ այդպէս չը լինէր, ես պէտք է կանանց կամ սիրելի, կամ աստէի, բայց այդ այդպէս չէ: Բանը նրանումն է, որ այդ դէպքումն էլ ես չէի կապվի մի կնոջ հետ, որքան էլ որ նա գեղեցիկ լինի, որովհետեւ ես չեմ սիրում նրան:

—Էլի սեր, ան Աստուած, էր անտէր սերիցը մի թիչ էլ մեզ տայր ինչ, որ մենք էլ իմանալիք դրա համը, դրա ինչ լինելը: Այսքան կարողացել եմ սիրոյ մասին ու լսել, բայց ես չեմ զգացել, որ ես էլ հաւատում, թէ յիւրաքէ կայ սեր ասած բանը: —Ուզում ես բացասել սիրոյ գոյութիւնը հա: Ասա ինչդեմ, եթէ չը կայ սեր, ապա ի՛նչ կայ: —Ձգտում դէպի կինը... —Ձգտումն Ուրեմն, ըս ասելով տղամարդ պիտի վերաբերվի դէպի բոլոր կանայք անխտիր խստեանի:

երկիր պատճառելով կանանց իր արձակած թընդիններով:

Ժամը 12-ը չը լրացած, Նոյա Մեծութիւնները վերադարձան Մուշտաղից, ժողովուրդը անդադար չուրաք էր դուռնալ իսկ ժամը 12-ին ինքը հասարակութիւնը սկսեց փոքր առ փոքր ցրվել:

ՆԱՄԱԿ ԱՅԻԱԿԱՒԱԿՅ

20 սեպտեմբերի

Ստիպված եմ այս անգամ ևս նամակիս նիւթ վերցնել Ախալքալաքի դպրոցների այժմեան դրութիւնը և նոցա հոգաբարձութեան գործունէութիւնը, որոնց մասին խօսելը միանգամայն անհրաժեշտ եմ համարում:

Երբ 1886 թ.ին, նոր կանոնադրութեան համաձայն, բացվեցան ծխական ուսումնարանները, մեր հոգաբարձութիւնը պաշտօնապէս յայտնել էր, որ Ախալքալաքի ուսումնարանները կը լինեն և ևրկը դաստիարակող նպատակով և չը բանալ այս տարի երկրորդ դասատուն, չը նայելով որ այս տարվայ հարցաքննութիւններից յետոյ թէ աշակերտներ և թէ աշակերտուհիներ բաւական թւով փոխադրվելին յիշեալ դասատան առաջին բաժանմունքը Որովհետև հոգաբարձութիւնը իր այդ անհեթեթ կարգադրութեանը հիւր է ընդունել ուսումնարանների նիւթական սղութիւնը, ուստի հրաւիրում եմ ուշադրութիւն ուսումնարանների մուտք և ծախքի հետեւալ հաշի վրա, որը ես քաղել եմ հաշուետւոյններից, և որոնց ճշգրտութեան երաշխաւոր եմ: Ուսումնարանները տարեկան մուտք ունեն, Ախալքալաքի Ս. Փրկչի եկեղեցու կալուածների արդիւնքից նպաստ 1,000 ռ., ուսումնարանապետական անշարժ կալուածներից—700 ռ., ուխտատեղիներից 250 ռ., մոմա-

վածաւորութիւնից 400 ռ., թռչակադրամ 500 ռ., Յովնանեանցի և Միրիմանեանցի նուէր 250 ռ., տեղիս եկեղեցու արդիւնքից նպաստ 180 ռ., և վիճակախաղից 100 ռ. ընդամենը 3,380 ռ., իսկ ծախս է անում. ետքը ուսուցիչների վարձ 2,550 ռ., ծառաների վարձ—100 ռ., անշարժ կալուածները կարկատանի, վառելիքայտի, ջրի և Ուրեմն, ինչպէս երևում է այս հաշուից, ուսումնարանների տարեկան մուտքը 530 ռուբլով աւելի է տարեկան ծախսից, իսկ եթէ հաշուելու լինենք, այսպէս անուանված անուղղակի աղբիւրներից ստացված մուտքը, որպիսիք են՝ թատրոնական ներկայացումները, Կոնստանտնուպոլսի Կաթաղի շրջապայքը և այլն, որոնցից վտահ կերպով տարեկան կարելի է ստանալ մոտ 400 ռ. այն ժամանակ մեր աւելորդ դուստրը կը լինի 930 ռ., և անհամար այդպիսի պատկառելի աւելորդ գումար ունենալուց յետոյ հոգաբարձութեան «խելահաս» և «գործունայ» անդամները կարգադրում են չը բանալ երկրորդ դասատուն և այն էլ «նիւթական միջոցների սղութեան պատճառով»: Գուցէ ասողներ լինեն, որ մենք մեր վերջինիս հաշի մէջ չենք մտցրել ձրիավարած աշակերտները համար դասական պիտոյքների ծախքը և այլ մի քանի անհայտ ծախսեր, բայց մենք այդ չենք արել նրա համար, որ ուսումնարանում աշակերտները վրա դասական պիտոյքներ վաճառելուց այնքան օգուտ է ստացվում, որ համարեա ծածկում է ձրիավարների համար արած ծախքը և բացի այս, մուտքի մի քանի աղբիւրները ես հաշուել եմ առ ուսումնարան, մինչդեռ այդ աղբիւրների մուտքը միշտ մի քանի ռուբլիներով մեր հաշուածից աւելի է լինում: Չը պետք է մոռանալ և այն, որ ուսումնարանների ունեցած հին ապակիներից, որը կազմում է մի պատկառելի գումար, հոգաբարձութիւնը ամենայն տարի ստանում է 200—300 ռուբլի և բացի այդ եթէ հոգաբարձութիւնը գէթ մասամբ իր պարտականութիւնները կատարելու ցանկութիւն ունենայ, այն ժամանակ մուտքի մի քանի աղբիւրներից, ինչպէս են մոմավաճառութիւնը, վիճակախաղը, ուխտատեղիները և այլն կարելի է անհամատ աւելի արդիւնք ունենալ:

Այս բոլորից յետոյ ես կարծում եմ, որ հոգաբարձութեան կարգադրութիւնը դասատուն չը բանալու վերաբերմամբ ոչ թէ միայն անիրաւացի է անհեթեթ է, այլ նոյն իսկ վնասակար մեր ընդհանուր ուսումնարանական գործին:

Աւելորդ չի լինի մի քանի խօսք սակ այստեղ հոգաբարձութեան ընդհանուր գործունէութեան մասին: Մեր հոգաբարձութիւնը հանդերձ իր նախադասով, ինչպէս մենք առիթ ենք ունեցել նըկատելու «Մշակի» միջոցով, բոլորովին անբաւարձում էր իր մտադրութիւնը իրագործելու մասին: Ես ժամանակ չանցած Հայկերէնացի դարձաւ տիկին Վարվաքէի մտերմը...

Սրբեր անցնում էին, բերելով իրանց հետ նոր նոր դասաւորութիւններ օր. Վարդուհու համար, իսկ ստիպանք, միեւնոյնութիւն և ոչ մի հատ Շիրազեանի նոցա տուն գնալ-գալուց հրաժարվել մի մեծ կորուստ էր նրա համար: Չը նայելով որ նա Շիրազեանին ամենայն բան համարձակ չէր կարողանում անել, չը նայելով որ նրա հետ շատ երկար չէր կարողանում լուսնել, բայց այնուամենայնիւ այդ կարճատև և երբեմն նոյն իսկ ոչ նրան վերաբերեալ խօսակցութիւնը մեծ միեւնոյնութիւն էր պատճառում նրան, եթէ աչքի առաջ առնենք այն շրջանը, որի մէջ ընկել էր նա իր քրոջ գալուստից յետոյ: Անտանկի դրութիւն էր Չը նայելով որ նրանց տունը միշտ լինէր էր լինում հիւրերով, բայց նա դուռ էր լուրան միշտ միայնակ և շատ անգամ ուրախութեամբ հեռանում էր այդ հիւրերից, որոնց սովորական անբովանդակ խօսակցութիւնը անտանկի էր նրա համար: Նա առանձնանալով իր սենեակը կամ դիւր էր կարողում, կամ ցնորքները—միայնակութեան միակ ընկերը—դրիւն էր ընկնում: Թէ մէկը և թէ միւրը աւելի բաւականութիւն էր պատճառում նրան, բայց տիկին Վարվաքէն այդ բաւականութիւնից էլ նրան զրկում էր:

Մի կրթված օրիորդի համար ամօթ է բարեկրթ մարդկանց հասարակութիւնից փախչելը, նկատում էր նա օր. Վարդուհու և կրկին հիւրասենեակը տանում:

Մի ուրիշ ցու. աւելի էր տանջում օր. Վար-

բար է գործում. նրա գործունէութիւնը կայանում է միայն տարվայ ընթացքում 8 կամ 10 փողովներ անկում. նա այնքան անընդունակ է և անտարբեր, որ դեռ մինչև այսօր անցեալ տարվայ ուսուցիչներից մի քանիսը չեն ստացել իրանց ուսուցիչներից մի մասը, որպէս թէ ուսումնարանի փող չունենալու պատճառով, մինչդեռ հոգաբարձութեան մի քանի անդամները շատ ժամանակից ի վեր պահում են իրանց մօտ ուսումնարանի փողերը և չեն ցանկանում յանձնել այդպիսիք ուսուցիչներին: (Տես «Մշակի» այս տարվայ № 58): Չը տեսնված բան. ուսումնարանի փողը իրանց զրպանում ունենալ, իսկ ուսուցիչն ուսուցիչ չը տալ, ասելով թէ փող չը կայ: Գեռ այդ բաւական չէ, որ հոգաբարձութիւնը ոչինչ չէ անում, այժմ էլ նրա անդամները կուսակցութեան բաժանվելով ամեն կերպ վնասում են ուսումնարաններին, ստորացնելով հասարակութեան առաջ թէ իրանց և թէ ուսումնարանների պատիւը և նշանակութիւնը: Ինքն նախադաճը, փորձանակ աշխատելու կուսակցութիւնների առաջն առնելու, ինքը կուսակցութեան պարագլու է դառել «խնամութեան» պատճառով: Աւելի քան ցանկալի էր, որ նախադասութիւնը յանձնվէր մի այլ անձնաւորութեան: Այս տարի հոգաբարձութիւնը չը ցանկացաւ մի ընդհանուր հաշի անցում տալ հասարակութեան ուսումնարանների նիւթական դրութեան մասին և մինչև այժմ ոչը տեղեկութիւն չունի այդ հաշիների մասին, իսկ երբ կարիք լինի հոգաբարձութիւնը դիմում է նոյն հասարակութեան և նիւթական օժանդակութիւն է խնդրում ուսումնարանների համար, հաւատացնելով որ նա փողը կարողութիւն ունի: Աւելի քան աննեղելի է դիմել հասարակութեան և օժանդակութիւն խնդրել, և նրան հաշի չը տալ այդ մասին:

ՆԵՐՏԻՆ ԼՈՐՈՐԵՐ

Նոյա կայսերական Վեծութիւնների թիֆլիս գալու պատճառով, թիֆլիսի բոլոր դպրոցներում երեք օր ուսում չի լինի և աշակերտներն ու աշակերտուհիները արձակ կը լինեն մինչև հինգշաբթի, ամսիս 6-ը:

Տեղական պաշտօնական լրագրից հաղորդում է, որ թագաւոր կայսրը, սեպտեմբերի 28-ին, ամենաողորմածաբար չնորհեց՝ թիֆլիսի ազնուականների դատաւական պարագլու Մարտիկ Օվին աննկպակտի կոչում, Միսայիլ Կոնստանտինների դատաւական պարագլու իշխան Անդրօնի Կոչում, իշխան Գրուզինսկու, և թիֆլիսի նահանգապետի առանձին յանձնարարութիւնների

դուռնու: Այդ Պատրիկեանի դրութիւնն էր Նորա նամակները միշտ լինէր էին լինում զանգառներով իր գրութիւնից և աղաչանքներով, եթէ կարելի է մի կերպ օգնել իրան: Մտածուելից հալվում ու մաշվում էր խեղճը:—Ինչ անէր, կամ ինչ կարող էր անել մի օրիորդ, որի ձեռքերն ու ոտքերը կապված էին: Մի անգամ նա մատանին և մի քանի ռուբլի ուղարկեց նրան, բայց ծնողները խեղճի զլխին այն բանը զրկին, որ խեղճը պատրաստ էր իրան ծախել և այդ մատանին թափել: Վերջին անգամ նա ստացաւ մի նամակ, որը մուսոցնել տուեց նրան զլխին եկածը: Նորա մէջ Պատրիկեանը իր քաջած նեղութիւնները նկարագրելուց յետոյ խնդրում էր ամառ առնենք այն շրջանը, որի մէջ ընկել էր նա իր քրոջ գալուստից յետոյ: Անտանկի դրութիւն էր Չը նայելով որ նրանց տունը միշտ լինէր էր լինում հիւրերով, բայց նա դուռ էր լուրան միշտ միայնակ և շատ անգամ ուրախութեամբ հեռանում էր այդ հիւրերից, որոնց սովորական անբովանդակ խօսակցութիւնը անտանկի էր նրա համար: Նա առանձնանալով իր սենեակը կամ դիւր էր կարողում, կամ ցնորքները—միայնակութեան միակ ընկերը—դրիւն էր ընկնում: Թէ մէկը և թէ միւրը աւելի բաւականութիւն էր պատճառում նրան, բայց տիկին Վարվաքէն այդ բաւականութիւնից էլ նրան զրկում էր:

Այդ միջոցում լուր տարածվեցաւ թէ Պատրիկեանը Մոսկվայում ունի մի սերեկան և թէ արդէն գրել է իր աղաչանքներից մէկին, որ օր. Վարդուհու հետ նա չէ պատկվելու, որովհետև նորա ծնողները իրան չեն օգնել ուսանելու ժամանակ և իր ծանօթ ընտանիքներից մէկում մի օրը օրիորդ կայ, որը ունի 35,000 ռուբլու կա-

պաշտօնայ իշխան Բագրատիւն-Մուխրանսկու Նորին կայսերական Վեծութեան պալատի կամերիւնկերի կոչումը:

Նորին կայսերական Վեծութիւնը պատուաւոր պահակախումբին մասնակցող ազնուականներին ամենաողորմածաբար չնորհեց միլիթայի պրայօր շէրիկի աստիճանը:

Թիֆլիսի ոստիկանապետ Բոսսիւնսկու Բարձրագոյն չնորհված է թանգազին ընծայ, այն է մի ազանանդայ մատանի:

Չանդուր Քաւառի ՂԱՐԱՔԻԼԻՍՍ, զիւլից մեղ գրում են, որ սեպտեմբերի 26-ին, առաւօտեան 8 ժամին բաւական սաստիկ երկրաշարժ եղաւ այդտեղ: Երկրաշարժը տեղ մոտաւորապէս 30 վայրկեան և լուրւմ էր ստորերկրեայ որոտ: Այդ երկրաշարժից, որի նմանը ձերբը Ղարաքիլիսայում չեն յիշում, փլել են մի քանի տներ, սակայն բարեբաղդաբար մարդկանց հետ վնաս չէ եղել:

ԱՍՏՐԱԿԱՆՅ, սեպտեմբերի 25-ից մեղ գրում են հետեւեալը: «Շտապում եմ հաղորդել ձեզ մի տխրալի լուր. Աստրախանի ամենամեծ և զեղեցիկ Պօղոս և Պետրոս հայոց եկեղեցին այժմում է: Առ այժմ ճիշդ յայտնի չէ թէ ինչից է առաջացել կրակը կարծում են որ հրդեհը պատահել է մոմերի հետ անդրոջ վառվելուց, կամ մոմերը միմեանց մօտ հաւաքուց: Կրակը բռնկել է աշակերտան փողբիկ սեղանից և ամբողջապէս այրվել է խորանը: Այսօր դեռ շարունակվում է հրդեհը: Հրաչէջները եւանդուն կերպով աշխատում են և յոյս կայ որ չուտով կը հանսցնեն Ամբողջ քաղաքը խռովել և եկեղեցու առաջ, տեսարանը տարափելի է: Շտապում եմ զէպի հրդեհը, իսկ մանրամասն տեղեկութիւնները հետեւեալ անգամ կը հաղորդեմ Չանդալիների տխուր ձայնը անդադար կանչում է ժողովրդին օգնութիւն հասցնելու այրվող տաճարին»:

«Մշակի» անցեալ համարում (№ 111) մտել է մի տպագրական սխալ: Նոր-Նախիջվանի Գողոյեան դպրոցի ուսուցչուհու ազգանունը, որը մեղ ուղարկել է յօդուտ Բաֆֆիլի մահարձանի 13 ռուբլի, ոչ թէ Կատարինէ Ախաշեան է, այլ Կատարինէ Ախաշեան:

ՊԵՏԵՐՈՒԳՐՈՒՅ մեղ գրում են: «Բարձրագոյն դպրոցներ մասող հայերի թիւը շատ աննշան է այս տարի. կարծում էր թէ հինգ հոգի են Ղայ չը տեսնված բան է, դո՞նէ մեր օրով»:

Բողոքութիւն և որ իրան արդէն հաշուում են այդ օրիորդի օրինաւոր փեսացուն: Այդ և այդ տեսակ լուրերը համարում էին օր. Վարդուհու աղանջին: Նորա դաւանացնում էին նորա սիրտը, բայց բողոքովին անհաւատալի էին թվում: Նա այդ բողոքը իր ծնողների և ազգականների հնարածն էր համարում, մանաւանդ որ նոյն ժամանակալիջողոյեան յայտնվեցաւ նրա համար կրկին մի նոր փեսացու: Գա մի հարուստ վաճառական էր,— խրիստափօր Մարտինի Ղալիբեկով ազգանունով: Նա յիսուն տարուց անց մի մարդ էր, կողոր փորով կարճ ու հաստ ոտներով, մեծ, կարմիր և չէշոտ քիթով, կարմիր շրջանակի մէջ թաղված ճարպոտ աչքերով, չաղլիկ ու շողողուն երեսով, որի վրա ցանց էին կապել արեան անթիւ մեծ և փոքր երակները, կլոր զլխով, որի վրա կար մի քանի զոյգ մազ միայն և որ ամենաղլխաւորն է, համբուրելու համար յարմար, հաստ շրթունքներով: Ան այս մարդը յիսուն տարուց աւելի անկին մնալուց յետոյ, որոշեց ամուսնանալ ոչ այրի կնոջ, ոչ պատուաւոր կամ տղի օրիորդի, այլ ջահիլ, զեղեցիկ և չնորհով օրիորդի հետ: Այս որոշումը սենկիս նրա զլխով անգամ չանցաւ թէ ով կը տայ իրան ջահիլ և զեղեցիկ աղջիկ, կամ թէ աղջիկ կը ցանկանայ նրան գնալ:—Նա սովորել էր ամեն բան, այն, ամեն բան, փողով գնել, և այժմ էլ վտահ էր իր փողի ազգեցութեան վրա: Իր ամուսնապաւտ անհրաժեշտութիւնը վճարուց յետոյ նա մի խոսակ երկու տեղի ինամասուներ ուղարկեց իր քաղաքից թիֆլիս, իր համար մի արժանաւոր հարսնացու ճարկու, որովհետև իր մայրնի քաղաքում այդպիսին չը կար:

«ВРАТЬ» բնական թերթի ասելով, անցեալ տարի Շիլլերի հինգ համալսարաններում 11 հոգի ուստատանցի ուսանողները պաշտպանել են այլ և այլ դիսերտացիաներ ուսումնական աստիճանը ձեռք բերելու համար: Յիշեալ աշխատութիւնները ներկայումս վերցրած են մեծ մասամբ ֆիլոսոֆիայից, կան և քիմիայից գրուածներ, իսկ դիսերտացիաներից մէկը քաղաքա-անտեսական ու վիճակագրական գիտութիւնիցն է: Մի շնորհաւորութիւն օրիորդ էլ նորերումս ստացել է Ամերիկայի Բալթիմոր քաղաքի համալսարանից մի ուղեւոր մեղա՝ աջքանցած մասին գրած իր աշխատութեան համար:

Թուրքաց հայերին ուղղված Հռոմի պապի կոնդակի հարցին մայրաքաղաքների ուսուցիչ մամուլըն էլ նուրբում է յողաւածներ և նկատողութիւններ: Այդ նիւթի մասին երեւացին յողաւածներ ի միջի այլոց «Новости», «Новое Время», «Гражданин» և «Русский Курьер» լրագրիներում: Այդ վերջին լրագիրը, խօսելով այն բանի մասին, թէ ինչպէս վերաբերում է Հռոմի պապի թիւրքաց հայերին, վերջացնում է այս խօսքերով. «Չէ կարելի ուշադրութիւն չը դրանք այն հաստատումներուն վրայ, որով առաջ է տանում Հռոմի «պապականութիւն» իր գործը հայերի մէջ, թէ և Պոլսում և թէ Փոքր-Ասիայում: Այս բանում պապին նշանաւոր կերպով օգնում է Աւստրիան, որը չափ լաւ է հասկանում թէ որչափ հանգամանքներում է իր վերջին հայերը որքան աչքի ընկնող դեր են խաղալու արևելեան հարցի վիճակում»:

Պ. Յ. Նազարեանց խնդրում է մեզ յայտնել մեր ուսումնական մանկավարժական խորհուրդներին և հայոց լեզուի ուսուցիչներին, որ ներքա «Բնութիւն Հատուածներ» Ա. մասի առաջին սովորութիւնը բոլորովին սպառված է: Նոյն գրքի երկրորդ սովորութիւնը, որ արդէն մասնուրէի տակ է, լոյս կը տեսնի առաջիկայ նոյնութիւններին, և կը պարունակի իր մէջ 100 հատ նոր հատուածներ:

Շարաթ օր, հոկտեմբերի 1-ին, Թիֆլիսի ցերեկում սկսվեցան ներկայացումներ: Յիշելը բոլորովին վերաշինված է, պատերը աղիւսեցին, շինութիւնը ներսից էլ բաւական գեղեցիկ է: Շարաթ և կիրակի օրը ցերեկում այնքան հասարակութիւն կար, որ ասեղ զցելու տեղ չը կար: Խումբը կազմակերպված է շատ աջող կերպով, մինչև անգամ կան առաջնակարգ արտիստներ, ինչպէս կրօնի Գուրուի, արարելիքային վրայ խաղացող օր. Վաղիա, և Վեյկելի ընտանիքը:

Յօրկատիի դրամատիկական ուսուցիչները, ինչպէս լուրս ենք, կը սկսվեն վաղը, չորեքշաբթի օր, հոկտեմբերի 5-ին: Կը խաղան Վիլյէի չորս գործողութիւնամբ մի նոր կօմէդիա—«Въ помѣстьи госпожи Поводяевой» անունով:

Մեղ հաղորդում են, իբրև լուր, որ Վեհափառ Կաթողիկոսը ցանկութիւն ունի Բորժօմ գնալ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևիչին այցելելու համար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՌԻՍԻԱՅՑ

Կ. Պոլսոյ 24 սեպտեմբերի

Նախորդ նամակս յանձնած էի թղթատարին կըր իմացանք թէ դատական նախարարը նոր թիւ դեբերէ մը խրկած է ի Պատրիարքարան: Այդ թիւ դեբերէն հիմա օրուան խնդիր դարձած է, բայց լրագիրները անոր ճիշտ իմաստը չը հրատարակեցին: Այդ թիւ դեբերէ ով դատական նախարարը ցաւ կը յայտնէ սեպտեմբերի 16-ի նախին պատահած ցաւալի դէպքին առթիւ, — պատակի խնդիր, — ժողովրդական ցոյցերու մասին ալ կը խօսի և կը յայտարարէ թէ «պէտք եղած միջոցները ձեռք պիտի առնուին որպէս զի այլ ևս այդպիսի խանգարումներ տեղի չունենան»: — Կը յանձնարարէ շարունակել պատրիարքական շնորհաւորութիւնը և ընտրել տեղութեան հաւատարիմ ու վստահութեան արժանի Պատրիարք:

Թիւ դեբերէն համառոտութիւնը այս է: Քա-

ղաքական ժողովը սեպտեմբեր 22-ի երեքշաբթի առաւօտ նիստ ընկելով նկատողութեան առաւտոյն գիրը և որոշեց հաղորդել այդ թիւ դեբերէն Ազգ. ժողովոյ, յատուկ տեղեկագրով մը, այս պատճառաւ Ազգ. ժողովը պիտի գումարի սեպտեմբերի 27-ի երեքշաբթի առաւօտուն այդ խնդրով զբաղելու: Քաղաքական ժողովը չէզոք գիրը պիտի բռնէ, պիտի թողու որ ժողովը խորհի և որոշում տայ:

Այդ թիւ դեբերէն ընդհանրութեան մէջ երկու տեսակ մեկնութեան ենթակայ է, և տարակոյս չը կայ թէ Ազգ. ժողովոյ մէջ ալ այդ երկու մեկնութիւններն են, որք իրարու պիտի բախտին: Մէկ մեկնութիւնը բարթողութեան հանդէսն է, միւս մեկնութիւնը հակա-բարթողութեան հանդէսն է:

Բարթողութեան կը պնդեն թէ՛ դատական գործող նախարարը իր թիւ դեբերէով երկու պահանջ ունի: Ա. կը պահանջէ որ սեպտեմբերի 9-ի ընտրութիւնը չը բեկանի և սկսուած քուէարկութիւնը շարունակուելով Պատրիարքն ընտրուի: — Բ. դատական նախարարը կը պահանջէ որ ընտրելի Պատրիարքը լինի Բարթողութեան կայսր պատմ, վասն զի տեղութեան հաւատարիմ ու անոր վստահութեան արժանի Պատրիարք ըսելով դատական նախարարը մատնանիշ կընէ Բարթողութեան կայսրը:

Հակաբարթողութեան կը խնդրեն հետեւեալ կերպով կը բացատրեն: Ա. դատական նախարարը կը յանձնարարէ շարունակել «Պատրիարքական ընտրութեան գործողութիւնը» և ոչ թէ «Պատրիարքական քուէարկութեան գործողութիւնը», արդ ընտրութիւն մը դանաղան կերպարանափոխութիւններու ենթակայ է. առաջին քուէարկութեանը կրնայ ընտրուիլ պատրիարքը, համեմատականը կրնայ մնալ, համեմատականը կրնայ բեկանիլ, նոր ընտրութիւն կրնայ կատարուիլ այս ամենը ընտրական գործողութեան թիւններն են, դատական նախարարը յանձնարարելով ընտրական գործողութեան շարունակութիւնը ուրիշ բան չըբռնէր, բայց եթէ չը յապաղէր Պատրիարքն ընտրութիւնը: Բ. տեղութեան հաւատարիմ ու անոր վստահութեան արժանի Պատրիարք ըսելով, բնաւ չը հասկցուի միայն Բարթողութեան կայսրը, վասն զի եթէ միայն նա լինէր տեղութեան վստահութեան արժանացած, եթէ միայն նա լինէր տեղութեան հաւատարիմ, ինչ պէտք է ըսել միւս բոլոր կայսրական պատմներուն համար, ոչ մին տեղութեան անհաւատարիմ գտնուած է:

Ազգ. ժողովոյ մէջ վիճարանութիւններն այս հիման վրայ պիտի շարունակուին, մասնաւորապէս սպառնալով պիտի մղուի «ընտրական գործողութեան» և «ընտրական քուէարկութեան» տարբերութիւններու մասին: Հաւանական է որ առաջարկուի Յանձնաժողով մը կազմել «թեզերէ»-ին պատասխանը գրելու, և այդ պատասխանը լինի թէ հայոց կայսրականներն հաւատարիմ են միշտ, ամենն ալ առանց բացառութեան: Այս առաջարկը ընելու կարծիքներ կան, բայց թէ ընտրանութիւն կը գտնեն թէ ոչ, յայտնի չէ: Չենք կարծիք որ անհրաժեշտ հարկ մ'ալ ըլլայ պարզ թիւ դեբերէի մը համար Յանձնաժողով կազմել, բացառութիւններ տալ քանի որ դատական նախարարը բացատրութիւն չը պահանջէր, ալ պարզապէս յանձնարարութիւն կընէ:

Բնական է որ վիճարանութիւնները ուժգին պիտի լինին, զժբաղդութիւնն այն է որ կուսակցութեան ոգին մուցնել կուտայ ազգային իրական շահը: Մեր իրաւունքն է, մեր շահն է որ պատրիարքական ընտրութիւնը որչափ հնար է ընդարձակ ազատութիւնամբ ընենք, և ոչ թէ մեր ամեն մէկ քայլին «կանխ առէք» ըստի մեզ: Ժողովոյ մը մէջ այնպիսի դէպքեր, այնպիսի պատահանքներ կրնան առաջ գալ որ ժողովը նոր տնօրինութիւններ ընելու կը հարկադրուի, այդ տնօրինութիւններն ընել ժողովին իմաստութեանն և ազգաբարձեանն անկ է: Ի՞նչ կըլլայ հետեւութիւնը, եթէ ժողովը ընտրատուի գործել հակառակ իր խղճին: Ան կը ներկայանայ այդպիսի պարագայ մը այսօր: Պատրիարքական կերպով ընտրելի ղեմադէմ են, օրէնքը կը տրամադրէ թէ այսպիսի պարագայի մէջ նոր քուէարկութիւն կատարելու է երկու անուններուն վրայ միայն, առաւելագոյն ձայն ստացողը Պատրիարք է, քուէներու հաւասարութիւն պատահած միջոցին վիճակը պիտի որոշէ: Բայց ան հերկու ընտրելիներէն մին կը ընտրուի, պատճառ մը չը կայ որ հետաժողովը ժողովը անոր տեղ ուրիշ անուն մը պէտք է զննել միւս կուսակցութիւնը հակառակը

կը պնդէ: Ի՞նչ պատճառաւ: — Եթէ նա կը քաջուի կըսէ, մեր ընտրելույն տուէր, կամ ամենին մի տար ձեռք բերելը կըսեն: Արդ 120 երեսփոխանը կան այժմ 39 քուէ Բարթողութեան կողմն են, օր օրէնք, օր առողջ դատողութիւն կը հարկադրէ 81 երեսփոխաններ չէզոք մնալ, կամ հը պատակիլ 39 երեսփոխաններուն: Այս տրամաբանութիւնն այնքան պարզ է որ Բարթողութեան կողմը շուրջած, յուսահատած իրենց յոյսը թեւ չըբերէ ի վրայ միայն դրած են, և կը կարծուի, և կարծողներն ալ թերեւս չը սխալին, որ այդ թիւ դեբերէն մեր Պատրիարքարանի ներշնչմամբ եկած է:

Եթէ ստոյգ է որ այդ թիւ դեբերէն բերել տուողները մեր Պատրիարքարանէն են, բաւական խոշոր սխալ մը գործած են. մինչև ցարդ ինչ որ անուղղակի միջոցներ ի գործ դրուեցան ի նըպատ Բարթողութեան, այդ ամեն միջոցներն ուրիշ նպատակի չը յանգեցան, բայց եթէ հետզհետէ նուրբացնել Բարթողութեան կողմնակիցներն, այսօր Ազգ. ժողովոյ մէջ 81 երեսփոխանը հակառակ են Բարթողութեան, և երբ ուրիշ անուն մը առաջ դրուի, կը կարծենք թէ Բարթողութեան կայսրը այսօր 20 քուէ կունենայ:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Վեղծ բարերարներ» շնորհը, ինչպէս երեւում է, Կ. Պոլսին լաւ յայտնի է, որոնք իրանց անմիտ փառասիրութիւնը յորեցնելու համար, վերջին նեղութեան մէջ են գցում միամիտ երիտասարդներին նոցա արտասահման ուղարկելով, և հակառակ իրանց խոստման ոչինչ օգնութիւն չը հասնելով: Ան ալ հարցի վերաբերմամբ ինչ ենք կարծում «Արեւելի» մէջ: «Ժընէվէն հայ ուսանող մը նամակ մը ուղղելով խմբագրութեանը, ուշադրութիւն կը հրաւրէ այն ազգային բարերարներուն վրայ, որք մերթ կը հաճին որդեգրել զիւրիշ անդ, ալ քիչ յետոյ բոլորովին մոռացութեան մէջ կը թողուն զայն» կամ անհաւանական նպատակը և կամ բոլորովին դարեցնելով նպատակ, որով հէզ հայ ուսանողն օտար հողի կը մնայ անգը և թշուառ, ամեն փորձութեանց անձնատուր: Այսպիսի կարծեցեալ բարերարներու մի քանի զժբաղդ զոհեր կան եղբր նա Եւրոպոյ ալ քաղաքացի մէջ»:

Ինչնից հետագրում է մեզ «Հիւսիսային գործակալութիւնը» սեպտեմբերի 26-ին, որ զենեալ Բուլանտէ, անցնելով Բաղէլից, ուղևորվեց ղէպի Ֆրէյբուրգ:

«Մեկնութիւններ», ինչպէս գրում են Փարիզից, գործարար արած բանտները նորից սկսեցին աշխատել, համաձայնութիւն կայացնելով գործարանատերերի հետ:

«Temps» լրագիրը խօսելով օտարների վերաբերմամբ առաջարկած օրինազօծի մասին, այն միտքն է յայտնում, որ այդ օրինազօծը աջողութիւն չի ունենայ և մեծ աղմուկներ առաջ կը բերի պատգամաւորների ժողովում:

«Presse» հաղորդում է, որ Վիեննայում կայսրը խոստացել է վերաբարձին կրկին անգամ այցելել Վիեննա, ուր կը մնայ ամբողջ երեք օր:

«Վիեննայում կայսրի այցելութիւնը յետոյ, աւստրիական մամուլը սկսել է յաճախ խօսել այն մասին, որ շուտով կը վերջանայ բոլորական ճգնաժամը:

«Խալիպայի արժատական Յիցրիանի նորերս հրատարակեց մի հրակէր, որով առաջարկում է լատինական ծաղում ունեցող բոլոր ազգերին միասնալ կերպով հարկադրել իրենց ղեմադրելու համար: Աւստրիական կայսրուհին այս ձեռք պէտք է անցկացնել Կորթու կղզու վրայ:

«Հիւսիսային գործակալութիւնը» հետագրում է մեզ, որ «Journal de St. Petersburg» լրագիրը խօսելով այն գուշակութիւնների մասին, որ անուն են մի քանի լրագիրներ, յայտնի կայ զբաժանագրարողութեան և Ռուսաստանի առջև բոլորական գործերի վերաբերմամբ նրա ընդունած պարտաւորութիւնների մէջ, նկատում է, որ այդ տեսակ ենթադրութիւնը անհիմն է: Հաւատարմութեան պաշտօնական օրգանների հաղորդութիւններին, պէտք է կարծել որ կայսրի ճանապարհորդութեան նպատակն էր հանդիսաւոր կերպով հաստատելու Գերմանիայի բարեկամական զգացմունքները ղէպի Վիեննայի և Հռոմի կարեւորները և գերմանական նոր կառավարութեան խաղաղարկական մտադրութիւնները: Այդ պատճառով

ուով խօսք չէ կարող լինել որ և է. մասնաւոր հարցերի մասին: Պետերբուրգում Վիեննայում կայսրը, ի հարկէ, համոզվեց ուսուց կառավարութեան խաղաղարկական դիտարկութիւնները մասին և իր այդ համոզմունքը, անտարակոյս, նա աշխատեց հաղորդել Վիեննայի պալատին. նոյն ձեով կը վարվի, եթէ կողմնայ, և Հռոմում, բայց այդ բոլորը կը կատարի ոչ թէ որ և է յանձն առած պարտաւորութիւնների դորուութեամբ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 սեպտեմբերի: Հրատարակված է միւստրական մասնագործի կարգադրութիւնը, որը վերաբերում է կապեան-Չերնոմորեան նավթանցքի ընկերութեան կազմակերպութեան հարցի երկարացնելուն: Մինչև 1889 թիւ յունվարի 2-ը:

ԱՂԱՆՍՏԱՎԻ, 30 սեպտեմբերի: Գումայի շրջաններում ազանական ցեղերը սպառնալով են էմիրի դէմ:

ՀՌՕՄ, 30 սեպտեմբերի: Երէկ երկույեան այստեղ ձերբակալվեց մի երկնայ, որը տարածում էր հակա-աւստրիական թերթեր, իտալական և ֆրանսիական լեզուներով գրած: Նոյն յանցանքի համար զիչերը ձերբակալված է հանրապետական-սոցիալական լրագրի գլխաւոր խմբագիր Ալբանի: Վէտրից յետոյ, ժամը երկուսի սկզբին կայսրը քնաց Վատիկան: Կայսրը նստած էր սեփական պալատական կառքում. միւս կողմը երբ նրա ետեւից դնում էին զենեակները, քիչը-արիւտանները, կոսմ Բիսմարկ և թիկնապահների խմբի բարձր աստիճանաւորները: Կայսրը նախ այցելեց պապին, իսկ յետոյ եկաւ և պրինց Զինրիկոս: Վատիկանից պրոսական դեսպանատան վերադառնալը տեղի ունեցաւ մի և նոյն ձեով ինչ ձեով որ տեղի էր ունեցել Վատիկան դնալը:

ԲԵՂԳՐԱՎ, 30 սեպտեմբերի: Սերբիայի թագուհին այս օրերս Բուխարէստից կը դնայ Եսասի, իսկ այդտեղից էլ մի քանի օրից յետոյ կուղևորվի Ռուսաստան:

ՓԱՐԻՉ, 30 սեպտեմբերի: Պատգամաւոր Ժիլի, որը մեղադրում է բեւոճէտային յանձնաժողովը ղեղձուկների մէջ, վաղը կանչված է դատաստանական զննչի մօտ: Կառավարչական կուսակցութեան մէջ՝ սահմանադրութեան վերաբերումները հարցի վերաբերալ տարածայնութիւնները սաստկանում են:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 հոկտեմբերի: Մեծ Իշխաններ Սերգէյ և Պաւէլ Ալեքսանդրովիչներ և Մեծ Իշխանուհի Նիխաւետա Յէտորովնա սեպտեմբերի 27-ին մտան Երուսաղէմ և ուղղակի դնացին Քերեստի թաղման տաճարը: Նոցա Մեծութիւնները ենթադրում են մնալ Երուսաղէմում մինչև հոկտեմբերի 6-ը:

ՀՌՕՄ, 1 հոկտեմբերի: Կրիստի ուղարկեց Բիսմարկին հեռագիր, որով արտայայտում է իտալական ազգի զբացմունքները ղէպի Գերմանիան և ցանկութիւն է յայտնում, որ դաշնակցութիւնը ծառայի երկու ազգերի փառքին և Եւրոպայի խաղաղութեան: Բիսմարկ պատասխանեց նոյն մտքով: Այդպիսով իտալիայի և Գերմանիայի դաշնակցութիւնը ընդունում է անւի սրտակից բնաւորութիւն: Երէկ, Վիլհելմում տեղի ունեցած հանդիսաւոր ճաչի ժամանակ, Հռոմը թաղաւորը կենաց առաջարկեց գերմանացոյ կայսրի, կայսրուհու, գերմանական զօրքի, նրա փառքի և Գերմանիայի հաստատութեան համար: Կայսրը շնորհակալութիւն յայտնեց և մատնանիշ արեց երկու երկիրները վիճակի նմանութեան վերջ, որոնք մեծ առաջնորդների ղեկավարութեամբ ձեռք են գցել միութիւն: «Գրանից երևում է, — ասեց կայսրը, — որ երկու ազգերը միշտ կաշակցեն միմեանց՝ միութիւնը պահպանելու համար, որը խաղաղութեան ամենահաստատ գրաւական է:» Վերջում կայսրը շնորհակալութիւն յայտնեց թիւրալի ընդունելութեան համար և առաջարկեց թաղաւորական դրզի առողջութեան և իտալական քաջարի զօրքի կենացը:

ԲԵՂԳՐԱՎ 1 հոկտեմբերի: Թաղաւորը հրամայեց Գարաշանինին թողնել երկիրը, բայց Գարաշանին ընդդիմանում է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 հոկտեմբերի: «ВѢСТНИКЪ ДИПЛОМАТОВЪ»-ի մէջ այսօր տպված են քաղաքացիներ

պետական վերատուգելի հաշիւներէն 1887 թիւ վերաբերմամբ Գլխաւոր թւերը հետեւեալներն են. սովորական մուտք եղել է 829,662,000 ռուբլի, փոխանակ 796,369,000 ռուբլու. սովորական ծախքը արուած է և պէտք է անուր 835,850,000 ռ., նախահաշի մէջ նշանակված 832,928,000 ռուբլու փոխարէն—երէկ Սերգէեվսկի վանքում տեղի ունեցաւ կոմս Ալեքսէրովի թաղումը, ներկայութեամբ Մեծ Խլխաններ, վրնուորական և քաղաքացիական բարձր պաշտօնեաների և զիւլոմատիայի անդամներէն Նոյա Մեծուկիւնները ուղարկել էին չքեղ պատկ սպիտակ և կարմիր վարդերից. մի ուրիշ չքեղ պատկ էր ձեռքով դազարի վրա զրեց Մեծ Խլխանուէի Մարիա Պաւլովնա: «Journal de St. Pétersbourg» քաղերը օտար քաղերներում լոյս տեսած ինսինուացիաների առիթով, որոնք այն միտքն են յայտնում, որ Մակեդոնիայի այժմեան յուզումները ուսաց ինտրիզաների հետեանք են,—ասում է, որ հազիւ թէ բոլորները հաւատան զոցա, իմանալով որ Ռուսաստանը ոչինչ գործակալութիւն չէ պահում Բոլղարիայում և Բոլղարիայի գործերը նոյն իսկ Բոլղարիայի վրա է թողել: Լրագիրը նոյն իսկ չէր յիշատակի այդ ինսինուացիաների մասին, եթէ զոցա առաջ մղած չը լինէր,—ի մեծ զարմանս այդ քաղեր,—մի այնպիսի լուրջ օրգան, ինչպիսին է «Fremdenblatt» քաղերը:

ՍԻՍՏԱՎՅՏԳՐԱՎ, 2 հոկտեմբերի: Երէկ բացվեց ամբողջապէս բոնիս-կրեմնիզուգի երկաթուղին: ԼՕՆԿՕՆ, 2 հոկտեմբերի: Երէկ այստեղի քաղերներում լոյս տեսան մանրամասն քաղուածքներ դոկտոր Մէկենդիլի գրքից՝ Ֆրիդրիխ կայսրի մասին: Քաղաքական յայտնութիւններ զրբէ մէջ չը կան. նա յատկապէս ուղղված է պրոֆէսոր Բերգմանի դէմ, որին Մէկենդիլ մեղադրում է խողովակը վատ կերպով տեղադրելու համար, որի հետեանքը եղել է վաղահաս մահը: Բէրգման Մէկենդիլի դէմ դատ է սկսում, մեղադրելով նրան բամբասանքի մէջ:

ՀՈՍՄ, 2 հոկտեմբերի: Երէկ փառաւոր հանդէս կար. կապիտուլումի մէջ զրբից մի տախտակ հետեւեալ մակագրութեամբ՝ «Գերմանացոց կայսրի այցելութեան յիշատակիւն» և տեղի ունեցաւ կոնցերտ, որին ներկայ էին 3,000 հոգի: կապիտուլում չքեղ կերպով լուսաւորված էր էլէկտրականութեամբ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՄԱ Սեպտեմբերի 30-ին Լճիցի վրա 10 ֆունտ արծէ. . 92 ռ. 25 >

| | |
|--|------------|
| Համարողի վրա 100 մարկ — . . . | 45 > 40 > |
| Փարիզի վրա 100 ֆրանկ — . . . | 36 > 40 > |
| Ոսկի — արծէ . . . | 7 > 45 > |
| Մարտային կուպոններ — . . . | 148 > — > |
| Արծաթ — . . . | 1 > 16 > |
| Բորսային դիսկոնտներ — . . . | 7 > 80/0 > |
| Պետակ. բանկ. 5% տոս 1-ին շրջանի — . . . | 98 > 12 > |
| — — — — — 2-րդ — . . . | 96 > 50 > |
| — — — — — 3-րդ — . . . | 95 > 25 > |
| — — — — — 4-րդ — . . . | 96 > 25 > |
| — — — — — 5-րդ — . . . | 95 > 87 > |
| — — — — — 6-րդ — . . . | — > — > |
| Նոր 40/0 փոխառութիւն. | 81 > 12 > |
| Արեւելեան 50/0 փոխառութիւն. 1-ին շրջ. | 94 > 87 > |
| — — — — — 2-րդ — . . . | 95 > — > |
| — — — — — 3-րդ — . . . | 94 > 75 > |
| Ներքին 50/0 առաջին փոխառութիւն. | 263 > — > |
| — — — — — երկրորդ — . . . | 238 > — > |
| 5 1/2% ընդհանր. | 100 > 75 > |
| Ռուսիայի ընդհանր. | 168 > 25 > |
| Նոր երկաթուղային ընդհանր. | 144 > — > |
| 50/0 գրաւական թղթեր կալուած. | 95 > 12 > |
| — — — — — փոխ. կրեդ. ընկ. մեռ. | 146 > — > |
| — — — — — թղթագ. | 90 > — > |
| Գրաւ. թղ. Ալիւ. բանկի. | 96 > 25 > |
| 5 1/2% գրաւական թղթեր խորհրդի կալուած. բանկի. | 97 > — > |
| 60/0 գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան. | 100 > 50 > |
| — — — — — Պոլտավայի — . . . | 99 > — > |
| — — — — — Պետ. Տուրկ. — . . . | 99 > — > |
| — — — — — Կիւնի — . . . | 100 > — > |
| — — — — — Մոսկվայի — . . . | 100 > — > |
| — — — — — Օդէսայի — . . . | 91 > 37 > |
| — — — — — Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրլ. | 81 > 75 > |
| — — — — — Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը կենդանի է: | — > — > |
| Վճարակո-կամակի բանկի անցիաները 648 > — > | |
| Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. 233 > — > | |
| Բիւրնակ-Բուրգովի ընկ. | 81 > 50 > |
| Ս. Պետերբուրգի քաղաքային օրլ-գացիաներ. | 92 > 17 > |
| Մոսկվայի քաղաք. օրլ-գացիաներ. | 92 > 25 > |
| Օդէսայի — . . . | 91 > 37 > |
| Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրլ. | 81 > 75 > |
| Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը կենդանի է: | — > — > |

ՍՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

| | |
|--|--|
| Թիֆլիս. կարագու խորհուրդի (Գուրկիւն) Սերաստացի: Չըր անունով նամակ կայ խորագրատամբ: | |
| ԲԱՌՈՒՄ. Գաւիթ Չանուանաց. Գուր գրում էր մեղ, որ մենք ձեր հասցէն փոխենք և ուղարկում էք մեզ ձեր նոր հասցէն, բայց չէք ասում թէ սրանից առաջ միտք էք ստանում «Մշակը»: Հաղորդեցէք մեզ որտեղ էք ստանում: | |
| Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ | |

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

ԱՐԻՍՏՈՂՈՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

ՌՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԻՐԻՔ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Գինն է 3 ռուբլի, ճանապարհի ծախսը զնուղի վրա է:

Միանուագ քսանից աւելի գնողին զիջումն կը լինի:

Վաճառվում է ԲԱՅԱՌԱՊԷՍ Խիզիկէլի և ընկ. զբավաճառանոցում, Թիֆլիս, Գործիմասի Պրոսպեկտ, առաջին Գիմնազիայի հանդէպ. 3—40

ԿԵՕԼԷՐԵԱՆ ԿՕԼԴ-ԿՐԷՄ

կաշին փափկացնող բոլոր գործածական միջոցներէն յայտնվում է իր թարմութեամբ և իր բարձրագոյն թանկութեամբ:

Ծախվում է գաւառներում բոլոր նշանաւոր փաճառականների մօտ, իսկ Մոսկվայում Ռ. ԿԵՕԼԷՐԻ և ԸՆԿ. մօտ, Նիկոլսկայա փողոցում: № 9. П. К. О. (1—3)

ԱԶԲԱՅԱՆ ունեցողների ընդունելութիւնը բժիշկ Բէյլիսի մօտ, ամառվանից յետոյ, ՎԵՐԱՆՈՐՈՎԱՍԵ է: ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ Գրեթեբոլսկի փողոց, տուն Խարալովի № 3

Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան 9—10 ժամ: 2—3 (և. շ. հ.)

ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐՈՒՆՅԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԼԱԿԱՆ, ՄՐԳԱՅԻՆ ԵՒ ԳԱՋԱՅԻՆ ՋՐԵՐԻ

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ

ԲԱԹՈՒՄՈՒՄ

(Յերկոշկայա փողոցում, Կոնստանտինովի տան կից, որտեղ զետեղվում է Լճիկ և ընկ. ապարանը)

Պատիւ ունեմ յայտնելու պ. պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերա նորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ՃԱՄԱ ՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ: Գործարանի կառավարութիւնը և յանձնեցի ՖԱՐՄԱՅԻՍԱՑԻ մի ՊՐՈՎԻԶՕՐԻ, որ փորձառութիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում: Գործարանն ունի ամենամոր ձեւի միջինաներ, նոյնպէս և Չիվիլի հուշակար ՖԻԼՏՐԸ, որը միակ է, որ պողոթնեամբ մաքրում է ջրերը կապարից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղերից և գերազանցում է բոլոր միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ:

Պրովիզորը նշանաւոր գտնվում է և անձամբ պարապում է իմ գործարանում: Շնորհով այն օժանդակ միջոցներ, որ տալիս է գիտութիւնը անալիտիկական քիմիայի ճիւղում, այսուհետեւ իմ գործարանում կը պատրաստվեն, բացի զէլեկտրան, մրդային և զագային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱԼԱԿԱՆ ԲՃՇԿԱԿԱՆ ՋՐԵՐԸ, ինչպէս օքսիտի վիշի, իմի, կարպազի, Մարիէնքաղի ջրերը, լուծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետեւելով յայտնի հետազոտողների տուած կանոններին: Արուստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հուշակար բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել ընական ջրերին, բայց և ունեն մի քանի գերազանցութիւններ. նրանք կարող են միշտ թարմ դրուծեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամանակ պարունակելով իրանց մէջ ամբողջութեւ գազերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ախորժելի գառնալով խմելու համար և աւելի շուտ ներքործելով հիւանդ կաղմուածքի վրա:

Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կառարեալ մաքրութեան մէջ և վերաբերվել զէպի գործս ամենամեծ ճշտութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող են համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ:

Տարածայնութիւններից խուսափելու համար, խոնարհաբար խնդրում եմ իմ ջրերի գործածողներին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի նշանակը, քանի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը:

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ 38—50 (և)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒՆԻՍՆՈՑ

(կուկիս, վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՏՈՏԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—9—11 ժ. վիրաբուժական (նոյնպէս և ատամնացաւի) և վնեւեր. ցրՈՒԿՎՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց. ՍՕՐՈԼԵՎ—11—12 ժ. ատամնարոց. ՏԱՐՍԱՅԻՉԷ—12—1 ժ. ամեն օր, բացի կիւրակի. աչքացաւ. ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ. և կիւրակի կանանց ց. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի երեքշաբթի և ուրբաթ. ԵՐԵՎՈՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—5—6 1/2 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6 1/2—7 1/2 ժ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—6 1/2—7 1/2 ժ. ներքին և երեխայոց ց. Հիւանդանոցումն է մ'անկաբար քննել Մ օ զ Ե Ր ՎՃԱՐ—50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի). համար փոխարարձ համաձայնութեամբ: Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԻԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ. Հինգշաբթի, հո կտեմբերի 13-ին, ԱՆՍՕԼԻԱ (ANATOLIE) շոքրնաւը, նաւապետ ԲՕՇԷԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սաֆսոն, Կ. Պոլիս և Մարսել: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմոնդուի տան, Նաբրեժեմայա, և Թիֆլիսում՝ Կարկին Արժրունի գալլիեւում, № 103.

1—3

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Չ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:

Աւանդելի աւտրակայք օրը են՝ 1) Առևտրական ճտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն, և 7) գերազրութիւն:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 25-ից: Ընդունելութիւնները սեպտեմբերի 15-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլաշկու, Լաբորատորիայա փողոցի վրա, № 11: Իսկ օգոստոսի 20-ից Աղէքսանդր Փրիզօնովի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նազարնայա փողոցների անկիւնում, զեղատան դիմաց, ուր որ անցնելու են կուրսերը: Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ՁԻՍՊԷՍ եղբ. Ծովհանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.—вѣ Тифлисе, С. П. Мануэляндцу.

20—20 (ե. Շ.)